# *Հաղթանակած գործ*

Կարեն Աբգարյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ «իբրև» փաստացի ղեկավարել է մի քանի ընկերություններ, և չկատարելով հարկային պարտավորությունները խուսափել է հարկեր, տուրքեր վճարելուց (ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդված), ինչպես նաև ընկերություններին տարել է դեպի կանխամտածված սնանկություն (ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ հոդված): Կարեն Աբգարյանի պաշտպանությունը ստանձնել է **փաստաբան Կարեն Հովհաննիսյանը (փաստաբանական արտոնագիր թիվ 1212)**, ով քրեական գործով ձեռք բերելով անհրաժեշտ ապացույցները կարողացել է դատական կարգով ճանաչել և հռչակել Կարեն Աբգարյանի անմեղությունը և հասնել նրա լիարժեք արդարացմանը:

**Արդյունքում Կարեն Աբգարյանը ոչ միայն ձերբազատվել է իրեն սպառնացող 6 տարի ազատազրկումից, այլ նաև մերժվել է նրանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի ավելի քան 2 միլիոն ՀՀ դրամ գումարի առաջադրված պարտավորության բռնագանձման պահանջը: Արդյունքում լիարժեքորեն վերականգնվել են անհիմն մեղադրվող անձի իրավունքները և օրինական շահերը:**